«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Հակոբյան

Ուսումնական հաստատություն՝ Մրգաշենի միջնակարգ դպրոց

ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Սասնա ծռերը» բաղկացած է վիպական 4 մասից կամ ճյուղից, որոնցից յուրաքանչյուրը կոչվում է հերոսների մեկ սերնդի անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Միհր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Միհր»:

«Սանասար և Բաղդասար»: Հայոց Գագիկ թագավորը հարկատու էր Բաղդադի կռապաշտ խալիֆին: Վերջինս, լսելով արքայադստեր՝ Ծովինարի գեղեցկության մասին, ցանկանում է կնության առնել նրան, բայց մերժվում է: Կատաղած խալիֆն սկսում է ավերել Հայոց երկիրը: Ծովինարը որոշում է հոժարակամ դառնալ կռապաշտի կինը, որպեսզի հայրենիքը փրկի ավերումից:

Հայրենի լեռներում շրջելիս նա ծարավում է և Աստծուց ջուր է աղերսում: Հանկարծակի բխած Կաթնաղբյուրից Ծովինարը մի լիքը և մի կիսատ բուռ ջուր է խմում ու հղիանում: Հետո նա մեկնում է Բաղդադ: Որոշ ժամանակ անց ծնվում են Սանասարն ու Բաղդասարը, որոնք օրեցօր մեծանում են ու հզորանում: Խալիֆն ուզում է սպանել եղբայրներին, բայց նրանք են սպանում խալիֆին և իրենց մոր հետ փախչում գալիս են հայրենիք, հիմնում իրենց բերդը՝ Սասունը, հզորացնում ու շենացնում այն: Սանասարն ամուսնանում է Դեղձուն-Ծամի հետ: Ունենում են 3 զավակ՝ Միհրը, Ձենով Օհանը և Վերգոն:

«Մեծ Միհր»: Սանասարին հաջորդում է որդիներից ամենաքաջը՝ Միհրը: Այդ տարիներին Սասունը հարկատու էր Մըսրա Մելիքին: Չափահաս դառնալով՝ Միհրը տիրություն է անում երկրին ու ժողովրդին. հացի ճանապարհը փակող հսկա առյուծի երախը պատռելով՝ երկու կես է անում, որի համար նրան անվանում են Առյուծաձև Միհր, Սպիտակ Դևից ազատում է գեղեցկուհի Արմաղանին ու ամուսնանում նրա հետ, մենամարտում հաղթում է Մըսրա Մելիքին և Սասունն ազատում հարկերից, հիմնում է Մարութա Բարձրիկ Աստվածածինը, Ծովասարը դարձնում իր որսատեղին, շինում բերդեր ու կամուրջներ:

Մըսրում մեռնում է Մելիքը: Նրա կինը՝ Իսմիլ Խաթունը, խնդրում է Միերին գալ և տեր կանգնել իր երկրին՝ գաղտնի մտադրություն ունենալով ժառանգ ունենալ նրանից: Ծնվում է արու զավակ, որին Իսմիլ Խաթունը կոչում է Մելիք՝ ի հիշատակ մեռած

ամուսնու: 7 տարի նա Միերին պահում է իր մոտ՝ արբեցնելով թունդ գինով: Ի վերջո սթափվելով և զգալով իր սխալը՝ Միերը վերադառնում է Սասուն: Արմաղանը դժվարությամբ ներում է նրան: Միերը նորից շենացնում է Սասունը: Որոշ ժամանակ անց Արմաղանը ծնում է մի տղա, որին անվանում են Դավիթ: Երեխայի ծնվելուն պես Միերն ու Արմաղանը, պայմանի համաձայն, մեռնում են:

«Սասունցի Դավիթ»: Որբացած նորածին Դավթին ուղարկում են Մըսր՝ Իսմիլ Խաթունի մոտ, որտեղ քաջազունը մեծանում է ժամ առ ժամ: Մըսրա Մելիքը փորձում է խորամանկությամբ սպանել Դավթին, բայց պատանի դյուցազնը հաղթահարում է բոլոր փորձությունները և վերադառնում Սասուն: Ձենով Օհանը Դավթին կարգում է գառնարած, ապա՝ նախրապան, որսորդ: Դավիթն սպանում է Սասունը կողոպտած դևերին և երկրի ամբարները լցնում բարիքներով, միայնակ կոտորում է Մըսրա Մելիքի զորքին, վռնդում է նաև հարկահավաք Կոզբադինին: Մելիքը բազմահազար զորքով ինքն է արշավում Սասուն: Դավիթը սրի մեկ հարվածով երկու կես է անում խոր հորի մեջ թաքնված Մըսրա Մելիքին:

Սասունն ազատագրելուց հետո Դավիթը նշանվում է Չմշկիկ Սուլթանի հետ, բայց լսելով Կապուտկողի արքայադուստր Խանդութի գեղեցկության մասին՝ մի շարք քաջագործություններից հետո ամուսնանում է նրա հետ: Ապա գնում է Գյուրջիստան և 7 տարի մնում այնտեղ: Խանդութը ծնում է արու զավակ և անունը դնում Միեր: Չափահաս դառնալով՝ նա որոշում է գնալ և գտնել հորը: Ճանապարհին հայր ու որդի հանդիպում են և, իրար չճանաչելով, մենամարտում: Դավիթը Միերի բազկապանից ճանաչում է որդուն, չի ներում, որ նա հանդգնել է մենամարտել իր հետ և անիծում է. «Անմա՛հ ըլնես, անժառա՛նգ»: Դավիթն սպանվում է Չմշկիկ Սուլթանի աղջկա թունավոր նետից, իսկ ամուսնուն հավատարիմ Խանդութը ցած է նետվում բերդի գլխից:

«Փոքր Միեր»: Դավթին փոխարինած Փոքր Միերը պատերազմում է թշնամիների դեմ և հաղթում, սպանում է Չմշկիկ Սուլթանին՝ լուծելով հոր վրեժը: Ապա ամուսնանում է գեղեցկուհի Գոհարի հետ: Բայց կատարվում է հոր անեծքը. Միերը մնում է անժառանգ: Մեռնում է Գոհարը: Հողն այլևս չի դիմանում Միերի ոտքերի տակ: Սասնա վերջին քաջազունը փակվում է Ագռավաքար ժայռի մեջ՝ պատգամելով.

Քանի աշխարք չար է,

Հողն էլ ղալբցեր (ծուլացել) է,

Մեջ աշխարքին ես չեմ մնա:

Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,

Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,

Ու գարին էղավ քանց ընկուզ մի,

Էն ժամանակ հրամանք կա,

որ էլնենք էդտեղեն:

Քանի որ էպոսում հզոր ժառանգի թեման ունի հորինվածքային կարևոր արժեք, որով պայմանավորված են վիպական սերնդափոխությունը, ճյուղերի փոխադարձ կապը և հաջորդականությունը, ապա Փոքր Միհրի անժառանգ մնալով ավարտվում է նաև հերոսավեպը:

«Սասնա ծռերի» վիպական համակարգում միաձուլված են վերամշակված ու փոխակերպված հնագույն առասպելները, ավանդական վիպական սյուժեները, հեթանոսական պաշտամունքային տարրերը (ջուր, արեգակ), պատմական երգ-զրույցները: Այդուհանդերձ, էպոսի վիպական զարգացումը, ճյուղերի հստակեցումը, վերամշակումը կատարվել են միջնադարում՝ VII–XIII դարերում, նախ՝ Բաղդադի արաբական խալիֆության, ապա՝ Եգիպտոսի (Մըսրա) Էյուբյան արաբ տիրակալների դեմ XII–XIII դարերում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի ազդեցությամբ: Էպոսի հերոսներից (նաև բացասական) շատերն ունեն իրենց պատմական նախատիպերը:

«Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հայ դյուցազունների անպարտելիության ոգին է՝ պայմանավորված էպոսի նախահիմքում ընկած առասպելական հերոսների սխրանքներով և ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարով:

Իր սիրելի հերոսներին ժողովուրդն անվանել է «ծռեր», այսինքն՝ խենթ քաջեր: Նրանք աչքի են ընկնում գեղեցկությամբ, դյուցազնական ուժով ու զորությամբ, որ ստանում են

մայր բնությունից, հայրենի հողից ու ջրից: Սանասարը զորություն է առնում Վանա ծովից, այնտեղից հանում է իր ձին՝ Քուռկիկ-Ձալալին, զենքն ու զրահը՝ Թուր Կեծակին, Թամքը սադաֆին, Կապան ղադիֆեն և Խաչ Պատերազմին և այլն, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ:

Էպոսի առասպելական հերոսներն օժտված են մարդկային վեհ հատկանիշներով՝ պատվասիրությամբ, մարդասիրությամբ, ազատասիրությամբ, ունեն նաև թուլություններ՝ պարզամտություն, դյուրահավատություն: Սասնա քաջերը վեհանձն են ու շիտակ, նրանք կառուցող-շինարարներ են, հմուտ որսորդներ, անվեհեր մարտիկներ՝ պատրաստ մեռնելու իրենց հողի ու ժողովրդի համար: Սասնա հերոսները որքան էլ ատում են բռնությունն ու ստրկությունը, որքան էլ ցասումով են կռվում թշնամիների դեմ, բայց ամենևին դաժան ու անհոգի չեն:

Սասնա ծռերի առաքինությունները կատարելության են հասցված Դավթի կերպարում, որին ժողովուրդը դարձրել է իր իդեալ հերոսը:

Էպոսի գլխավոր հերոսուհիներին նույնպես ժողովուրդն օժտել է առանձնահատուկ գծերով. նրանք գեղեցիկ են, խոհեմ, զգայուն, պարկեշտ ու միշտ պատրաստ են իրենց կյանքը զոհելու հայրենիքի և ընտանիքի համար: Վիպերգի կանայք նաև խիզախ են ու մարտնչող («Ինչպես որ Դավիթ՝ քաջ, խորոտ մարդ էր, Խանդութ՝ թե՛ խորոտ էր, թե՛ քաջ էր»): Հայ ժողովուրդը չի ստորադասել կնոջը տղամարդուց. «Առյուծն՝ առյուծ է, էղնի էգ, թե որձ»:

Էպոսում գլխավոր հերոսների կողքին տեսնում ենք ժողովրդի իմաստնությունը մարմնավորող Քեռի Թորոսին, Ձենով Օհանին, արտատեր պառավին, արաբ ծերունուն և այլ տարեց մարդկանց, որոնք իրենց խրատներով օգնում են Սասնա քաջերին:

«Սասնա ծռեր» վիպերգը բանասացների միջոցով տարբեր պատումներով (տարբերակներ) անցել է սերնդեսերունդ և հասել է մեզ: Նրա մասին առաջին անգամ հիշատակել են XVI դարի պորտուգալացի ճանապարհորդներ Տենրեյրոն և Ալֆոնսոն:

Էպոսի պատումներից մեկն առաջին անգամ 1873 թ-ին գրի է առել Գարեգին Սրվանձտյանցը տարոնցի երեսփոխան Կրպոյից և 1874 թ-ին հրատարակել «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» վերնագրով: Մեկ այլ տարբերակ՝ «Դավիթ ու Միհր», 1889 թ-ին հրատարակել է Մանուկ Աբեղյանը (ասացող՝ մոկացի Նախո քեռի):

Ցայսօր հայտնաբերվել և գրառվել է շուրջ 160 պատում՝ «Սասունցի Դավիթ», «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Թլոլ Դավիթ», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» և այլ վերնագրերով: Դրանք գրառված են XIX–XX դարերում և կառուցվածքով, լեզվաբարբառային ու վիպական ներքին հատկանիշներով բաժանվում են տիպաբանական-տեղագրական 3 մեծ խմբերի՝ Սասնա, Մշո և Մոկաց: Ենթադրվում է, որ նախնական պարզ ու կուռ տիպը եղել է Սասնա խումբը, որի տարածումից ու տեղական մշակումներից էլ առաջացել են մյուսները:

«Սասնա ծռերը» ժանրային առումով խոսքային-երաժշտական վիպերգ է: Էպոսի եղանակավոր հատվածներից հայտնի են Կոմիտասի, Սպիրիդոն Մելիքյանի, Արամ Քոչարյանի և ուրիշների՝ գլխավորապես Մոկաց խմբի պատումներից գրառված 30-ից ավելի կտորներ (կան նույն երգի տարբերակներ), որոնք կարևոր են նաև ազգային մոնոդիկ (միաձայն երգեցողություն կամ գործիքային նվագ) երաժշտության ձևավորման ու զարգացման պատմության ուսումնասիրման համար:

«Սասնա ծռերը», դարեր շարունակ ավանդվելով բանավոր, ներառել և գեղարվեստորեն համադրել է հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների նյութական ու հոգևոր կյանքի կարևոր իրողությունները, դարձել պատմամշակութային արժեքավոր հուշարձան:

1939 թ-ին վիպերգի ստեղծման 1000-ամյակի առթիվ 60 պատումների հիման վրա կազմվել է միասնական, համահավաք բնագիր (հեղինակներ՝ Մանուկ Աբեղյան, Գևորգ Աբով, Արամ Ղանալանյան), որն ամբողջական և հստակ պատկերացում է տալիս էպոսի մասին:

Էպոսի համահավաք տեքստը թարգմանվել է ռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, բելոռուսերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն, լեհերեն և այլ լեզուներով:

«Սասնա ծռերն» ունեցել է բազմաթիվ գրական մշակումներ, որոնցից լավագույնը Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» (1903 թ.) անավարտ պոեմն է: «Սասնա ծռերն» ամբողջական կամ մասնակի մշակել են նաև Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Սողոմոն Տարոնցին, Վիգեն Խեչումյանը, Հմայակ Սիրասը, Մկրտիչ Խերանյանը, Նաիրի Զարյանը և ուրիշներ: Էպոսին բազմիցս անդրադարձել են կերպարվեստում (Հակոբ Կոջոյան, Երվանդ Քոչար, Միհեր Աբեղյան, Հրայր Իսաբեկյան, Արտաշես Հովսեփյան և ուրիշներ), երաժշտության մեջ (Գևորգ Բուդաղյանի «Խանդութ» երաժշտական կոմպոզիցիան՝ ըստ Ալեքսանդր Սպենդիարյանի երաժշտության, Էդգար

Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» բալետ-օպերան և այլն), կինոարվեստում («Սասնա ծռեր», ռեժիսոր՝ Արման Մանարյան, 2010 թ., մուլտֆիլմ), թատրոնում:

Երկրորդ աշխարհամարտի (1939–45 թթ.) տարիներին սփյուռքահայերի հանգանականությամբ ստեղծվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, Ղարաբաղյան պատերազմի տարիներին կազմավորվել են «Սասնա ծռեր» և «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատները:

ՀՀ-ում էպոսի հերոսների անուններով կոչվել են տեղանուններ, մետրոպոլիտենի կայարան՝ «Սասունցի Դավիթ»՝ Երևանում:

«...ամեն մի ժողովուրդ ունի համաշխարհային գրականության մեջ իր ազգային էպոսը: Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխատանքի առջև»:

Հովհաննես Թումանյան

«Սասնա Դավիթը» մեր ազգային հոգևոր մեծագույն հարստությունն է, որի մեջ արտահայտվում են ժողովրդի նվիրական խոհերն ու երազանքները, մեր դարավոր պայքարը հանուն ազատության, մեր ազգային կենցաղը, մեր բնավորությունը, մեր ոճն ու ոգին: Այս վեպը գրվել է հազար տարի շարունակ: Ժողովուրդը բերնեբերան այն պատմել է և հորինել, հարմարեցրել նոր ժամանակներին, հարստացրել նոր դրվագներով ու գաղափարներով, ամեն ասացող, ըստ իր շնորհքի ու հասկացության, մի բան է ավելացրել իր սովորածին, և այսպիսով, «Սասնա Դավիթը» դարձել է ժողովրդական հանճարի մի անգերազանցելի մարմնացում»:

Նաիրի Զարյան

Ի՞ՆՉ ԴԵՐ ՈՒՆԻ ԷՊՈՍԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ,ԻՆՉՊԵ՞Ս Է ՊԱՏԿԵՐԱԳՐՎԱԾ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԷՊՈՍՈՒՄ

Հայ ժողովուրդը ունի պատկառելի բանավոր ստեղծագործություն , որի պսակը կազմում ՝է Սասունցի Դավիթ էպոսը:Դյուցազնավեպում իշխող անկեղծության , ներքին մաքրության և դեպի հայրենիքը , աշխատանքն ու աշխատավոր մարդը ունեցած բուռն սիրո հրաշալի հատկությունները որպես ժողովրդի բարոյական վսեմ սկզբունքներ ՝դարերի շղթայի միջով հասել են մինչև մեր օրերը:Ժողովուրդը սեփական հոգու բարեմասնություններն ու խիզախումները մարմնավորում է իր իդեալ- հերոսի մեջ:Հերոսը դառնում է հավերժական կենդանի այն հուշարձանը,որի արարքների, որի մարդկայնորեն բաբախող սրտի վրա ժողովուրդը անեղծանելի ու հրե տառերով քանդակում է բարու և գեղեցիկի իր գաղափարները , վաղվա լավ օրվա իր երազանքներն ու բարոյական վսեմ սկզբունքները: Եվ այդ բոլորը էպոսում պատկերված են արվեստի հնարանքներով:

Վերաբերմունքը դեպի աշխատանքը ՝ որպես բարոյական սկզբունք

Աշխատանքը մարդկային ամբողջ կյանքի առաջին հիմնական պայմանն է :Յուրաքանչյուր մարդու դեպի աշխատանքն ունեցած վերաբերմունքի մեջ կարելի է տեսնել վերաբերմունք դեպի հայրենիքը , անցած ու եկող սերունդները:

Ֆիզիկական և մտավոր աշխատանքի միասնության բազմաթիվ օրինակներ ենք տեսնում Սասունցի Դավիթ էպոսում : Սանասարն ու Բաղդասարը չորս օրվա ընթացքում կառուցում են քառասուն տուն , այնուհետև ահռելի քարաժայռերից

կառուցում են Սասնա բերդը , ինչպես և մի փոքրիկ եկեղեցի: Եվ կառուցման հետ կապված աշխատանքի բոլոր տեսակները նրանք երկուսով են կատարում.

Սանասար պետ- պետ քարեր կպերեր,

Բաղդասար կը շարեր.

Շինեցին , խանին գըլոխ:

Դավիթը նույնպես գառնարած է , նախրորդ, որմնադիր, հերկ անող , անգամ ճարտարապետ, շինարար:Դավիթը, Մարութա սարում վառվող լույսը տեսնելով, իսկույն գծում է շենքի հատակագիծը և որոշում է անպայման վերակառուցել վանքը:

Մեր ժողովրդական բանահյուսության մեջ,մասնավորապես Սասունցի Դավիթ էպոսում, վերաբերմունքը դեպի աշխատանքը ներկայացվում է որպես բարոյական սկզբունք:Էպոսում աշատանքը որպես բարոյական արժեք , ամբողջանում է այն ժամանակ ,երբ տեսնում ենք Սասնա հերոսներին այս կերպ.

...Խորոխպեր, ես կըխնդրեմ քո մոտեն,

Ընցկնա պարապութեն չենք կըռնա ընցըցի,

Մկա քե խաթըր կա մըտ գեղական ,

Չի խամար մեկ ռընջբրութեն ըմ առ:

Հերոսների սխրանքներն անգամ աշխատանքային բնույթ ունեն: Մեծ Միհրըյոթ տարի Սասունը պահում է իր որսած կենդանիներով:

Սասնա հերոսները անձնական փառքի ու երջանկության համար մարտնչող ասպետներ չեն , նրանք ապրում են աշխատանքի մարդկանց հոգսերով ու տանջանքներով, որոնցից ժողովրդին ազատագրելու մեջ են տեսնում իրենց երջանկությունը:Սասունցի Դավիթը ժողովրդի նյութական պայմանների բարելավման , մարդկանց բարօրության միակ աղբյուրը համարում է արդար, ազնիվ աշխատանքը;Մինչև այժմ էլ ժողովրդի մեջ պահպանվել է աշխատանքի արդարությոնն ու սրբությունը խորհրդանշող `արդար եզան վաստակ

արտահայտությունը:Ժողովուրդը արդար եզան վաստակ է համարել սեփական տքնությամբ ու քրտինքով բաստակած հացը: ժողովուրդը երջանկության հասնելու միակ ճանապարհը համարել է ազատ ու ստեղծարար աշխատանքը:Էպոսի բոլոր հերոսները աշխարհ են եկել աշխատանքի համար,նրանք իրենց բավականությունը ստանում են աշխատանքի ընթացքում, ժողովրդին անձնվեր ծառայելու մեջ:Զենով Հովանը Դավիթին բացատրում է , թե աշխատանքը , նախրորդությունը միակ արդար ճանապարհն է կյանքում ապրելու համար:

Հըմեն մեկ տավրի գլոխ

Մեկ կուտ կուրիկ , մեկ կուտ ցուրին միզի հախ կը տան .

Շաբթեն մեկ անգամ էլ ,

Քաղքի բոլութին ի, տուն մեկ խաց կը տան:

Դավիթն էլ խոստանում է ծաղկի պես պահել նախիրը:Նրա համար աշխատանքը մեծագույն հաճույք է , առանց աշխատանքի կյանքը Դավիթի համար դադարում է իմաստավոր լինելուց:

Աշխատանքը ոչ միայն նյութական բարիքների աղբյուր է, այլ բարոյական հայացքների:Դավիթը հալալ աշխատանքի մարդ է , ազնիվ :Նա իր ծնող ժողովրդի նման միայն իր սեփականն է ուզում , իր աշխատանքի արդյունքը: Ինչ որ չի բխում իր աշխատանքից , իրենը չի համարում :Հալալի, արդարի գեղեցկությունը էպոսում բավական արտահայտիչ կերպով է դրսևորվել: Հալալը սեփական աշխատանքով արարվածն է , և դրանից դուս ամեն ինչ հարամ է ու խորթ ժողովրդին: Սա ժողովրդի արդարության փիլիսոփայությունն է , կյանքի նշանաբանը , նրա բարոյական սկզբունքը :Այն, ինչ ստեղծվում է արդար աշխատանքով , նրա նկատմամբ հարգանք և սրտացավություն կարող է հանդես բերել միայն աշխատավոր մարդը , աշխատանքի սովոր մարդը: Խանդութի համար հավաքված փահլևանների հետ խնջույքի նստած Դավիթը , տեսնելով թափթփված հացի կտորները , ասում է . Էլի , էսա սուֆրեն վիրու,

մեղք էսա խացեր կոխեն՝Սա աշխատանքի մարդու հոգեբանությունն է : Նա միայն կարող է իմանալ հացի՝ աշխատանքի արգասիք ու մեղք լինելու հանգամանքը:

Սասունցի Դավիթ էպոսը աշխատավոր ժողովրդի անկրկնելի ստեղծագործությունն է, որտեղ մարմնացել են հայրենի հողի , ազատ ու արդար աշխատանքի , իր հայրենիքը շենացնող ու հզորացնող աշխատավոր մարդու բարոյական վսեմ արժեքներն ու սկզբունքները:

Ի՞նչ դեր ունի էպոսը աշակերտների հայրենասիրության և արժեհամակարգի ձևավորման գործում

Աշակերտների մոտ դաստիարակությունն և ուսուցումը հանդես են գալիս միևնույն բովանդակային հարթության վրա, և անհատը հարմարվում է մշակույթին և դառնում հասարակության լիիրավ և լիարժեք անդամ: Այդ գործընթացում մեծ դեր ունի աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:Չեմ կարող չնշել Սասնա ծռեր դյուցազներգությունը, որը շատ կարևոր դեր ունի հայրենասիրության և արժեհամակարգի ձևավորման մեջ:

Դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք

ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Էպոսի գաղափարական բովանդակությունն ուսումնասիրելիս խնդիր եմ դնում աշակերտների մեջ դաստիարակել այն ներկայացնող հիմնական տարրերը՝ ազնվություն, հայրենասիրություն, բարձր բարոյականություն: Աշխատում եմ զարգացնել նրանց ազգային մտածողությունը, պետականության նկատմամբ ունեցած վերաբերմունքը: «Սասնա ծռեր»-ը մի ամբողջ համակարգ է, որը կրթում, դաստիարակում է մի ամբողջ ժողովրդի: Քանի որ էպոսի ուսուցումը նախատեսված է 10-րդ դասարանում, և քանի որ պատանիներն ավելի շատ են հակված ինքնուրույնության, ուստի աշխատում եմ պատրաստի մեկնաբանություններ և գաղափարներ չտալ, այլ իրենց՝ աշակերտների միջոցով բացահայտել էպոսի գաղափարական բովանդակությունը: Գիտենք, որ մեր ազգի՝ իբրև տեսակի գոյության հիմքը հայրենասիրությունն է, որը լավագույնս դրսևորվում է էպոսում: Հայրենասիրությունն էպոսի կերպարների համար առիթից առիթ ի հայտ եկող երևույթ չէ: Դա նրանց առօրյա կեցության ձևն է և դրսևորվում է նրանց բոլոր արարքներում՝ օտար զավթիչների դեմ մղած կռվում, երկրի շենացմամբ զբաղվելիս, հասարակական անարդարությունների դեմ պայքարում, հանուն ընտանեկան ավանդույթների պահպանման գործունեության ժամանակ, նույնիսկ բարկության և կամ քնարական տրամադրության պահերին: Բոլոր դեպքերում նրանք չեն կորցնում իրենց մարդկային կերպարը. արդարամիտ են, վեհանձն, մանկական մաքուր պարզությամբ, բռնության դեմ՝անողոք:Հայկական էպոսում արտահայտվել է հայի հավաքական կերպարը իր բոլոր ներքին հակասություններով , սխրագործություններով: էպոսի հերոսների կերպարներում հայ մարդու հոգեկերտվածքի յուրահատկությունները դրսևորվել են

ծածկագրված խորհուրդներով, այլաբանական դիպվածներով:Էպոսում արտացոլվել են հայոց բարոյական արժեհամակարգի անկյունաքարային գաղափարները ,արծածվել մարդասիրական բազմաթիվ հիմնախնդիրներ:Կարծում եմ՝ էպոսը շատ մեծ դեր ունի հայ մարդու կյանքում:Մեր երկիրը, հաճախ, շատ հաճախ ենթակա է եղել հարձակումների, այդ տեսնում ենք մեր վեպերի մեջ: Բայց տեսնում ենք նաև մեր ժողովրդի անընկճելի ձգտումն ու կամքը՝ պաշտպանվելու դրսից հարձակվող թշնամու դեմ և ոչնչացնելու նրան, հակահարված տալու իր հայրենի երկրի կեղեքիչներին և պահպանելու իր անկախությունն ու ազատությունը»:

Մեր էպոսի հոյակապ հերոսները դարերի ընթացքում հայ ժողովրդի համար եղել են ոգևորության աղբյուր: Ժողովուրդը ներշնչվել է նրանից ու անձնուրաց կռվել է իր գոյության, հարատևության և իր հայրենիքի բարօրության և ազատության համար: Մեր երիտասարդ սերնդի համար Սասունցի Դավիթը նույն ներշնչանքը պիտի լինի, Դավթի պես բոցավառվի հայրենիքի համար անշահասեր արիությամբ և զինված գիտությամբ ու տեխնիկայով, ինչպես Դավիթն ու Միհրն են զինված կայծակե թրով, սխրագործություններ կատարի իր սեփական ժողովրդի և ամբողջ աշխատավոր մարդկության ազատագրման և բախտավորության համար»,- իր հոդվածում գրում է Ավետիք Իսահակյանը:

Այսօր էլ շատ կարևոր է , որ նորից ոգեկոչվենք ,վերհիշենք մեր նախնիների սխրանքները և անսահման ու անշահախնդիր սիրով սիրենք հայրենիքը:Օտար նվաճողների դեմ մղած պայքարի ընթացքում ձևավորվել են հայ ժողովրդի բարոյական բարձրագույն սկզբունքները , մեր դյուցազնավեպի անանց գեղարվեստական առանձնահատկությունները, այն արժեքները, որ հանճարեղ ժողովուրդը ավանդել է ապագա սերունդներին, արժեքներ , որոնք կազմում են մեր ժողովրդի իմաստասիրության անմահ հուշարձանը:Դավիթի՝ հայրենիքի նկատմամբ ունեցած սերը բխում է դեպի մարդկություն ունեցած սիրուց:Նա կռվում է ոչ միայն իր ժողովրդի իրավունքն ու պատիվը պաշտպանելու, Սասունը ստրկացնող ձեռքից ազատելու ,այլև ազատագրում է բռնակալի լծի տակ հեծող ժողովրդին:Սա բարձր տիպի հայրենասիրություն է ,նրա հայրենասիրությունը ճշմարիտ զգացմունք է, մի հանդարտ ջերմություն. ահա թե ինչու նա իր հաղթանակը չի օգտագործում հարևան ժողովուրդներին ստրկացնելու համար:Հատկապես դյուցազուն Դավթի կերպարը շատ կաևոր տեղ ունի հայեցի դաստիարակության մեջ:Երբ հայրենի Կաթնաղբյուրով

դյուցազնացած ու անխոցելի դարձած արշավում է մարտի ,նա երեք անգամ որոտաձայն գոչում է.

Ով քընած է՝ արթուն կացեք ,

Ով արթուն է՝ ձիեր թամբեք,

Ով թամբեր է՝ զենքեր կապեք,

Ով կապեր է՝ ելեք, խեծեք,

Չասեք Դավիթ գող-գող էկավ,

Գող-գող գընաց:

Նրա կանչը մարդկային վեհության, սեփական ուժերի անպարտելիության գիտակցման լույսն է, որ կայծակում է թրի հարվածից առաջ.այն մեր ազատաբաղձ ժողովրդի հոգու լույսն է ու աշխարհի բռնակալների երեսին հասցված բարոյական ապտակը:Դավիթը չի ուզում հանկարծակի հարձակվելով անսպասելի խառնակություն ձգել բանակի մեջ և ապօրինի ձևով օգտվել այդ խառնակությունից:

Բարձր առաքինություն է , որ ամեն մեկին իրավունք է տրվում պաշտպանվել և օգտագործել բնությունից իրեն տրված հզորությունը: Եվ Դավիթը մեծ առաքինությամբ օժտված դյուցազն է:

Հայրենիքի սերը հզոր է , քան մահվան զգացումը ,քան մահը:Այս մենք զգում ենք էպոսի յուրաքանչյուր տողն ընթերցելիս:Էպոսի ամեն տողից բխում է այդ գաղափարը: Սա հայրենասիրության վառ օրինակ է, որից պիտի ոգեշնչվեն այսօրվա երիտասադները:Հայրենասիրության գաղափաը էպոսում պատկերագրվել է ազատության համար պայքարի դուրս ելած հերոսների սխրական արարքներում :Եվ ,իսկապես, էպոսը ժողովրդի հերոսական հոգու երգն է:Հայրենիքի նկատմամբ ունեցած սերը մահն անգամ չի կարող խզել:Գոհարը, որի մահը վրա է հասնում Միհի բացակայության ժամանակ , կտակում է՝իր աճյունը չթողել օտար հողում , այլ տեղափոխել Սասուն :Սասնա այս հերոսամատյանը բոցավառված է հայրենասիրական կիզիչ հրով,որով ջերմացել են բազում սերունդներ, և պիտի ջերմանանք նաև մենք:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի և հայրենասիրության գործում էպոսի դերի մասին: Արժեհամակարգի ,հայրենասիրության ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ հայ գրականություն առարկան: Դպրոցում սովորողները Հայ գրականություն առարկայի ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին, հայ բանահյուսության գոհաներին:Սասնա ծռեր էպոսը հայ բանահյուսության ամենաթանկ գոհարներից է : Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,թե որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:Շատ մեծ է էպոսի դերն ու նշանակությունը

հայրենասիրության և արժեհամակարգի ձևավորման գործում :Հայ ժողովուրդն էպոսի մեջ ցայտունորեն արտահայտել է իր ուժի անպարտելիության գիտակցությունը,ազատագրական ոգին ,ջերմ սերը դեպի հայրենիքը, ժողովուրդը, աշխատանքն ու ազնիվ վաստակը: Մեր էպոսն անմահ է :Այդ հոյակապ ստեղծագործությունը ներկայումս էլ ոգևորում է մարդկանց և ծառայում նրանց հայրենասիրական , ժողովրդասիրական ու հերոսական ոգով դաստիարակելու գործին:Այն արժեքները ,որ ժողովուրդն ավանդել մեզ ,որոնք կազմում են մեր ժողովրդի իմաստասիրության անմահ հուշարձանը , շատ խնամքով պիտի պահենք ու փայփայենք:Սիրենք հայրենիքը , հային ու հայկականը...

Բովանդակություն

1.ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

2.Ի՞ՆՉ ԴԵՐ ՈՒՆԻ ԷՊՈՍԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ,ԻՆՉՊԵ՞Ս Է ՊԱՏԿԵՐԱԳՐՎԱԾ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԷՊՈՍՈՒՄ.....8

2.1.ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔ.....9

2.2.ԻՆՉ ԴԵՐ ՈՒՆԻ ԷՊՈՍԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....11

3.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15

Օգտագործած գրականության ցանկ

1.Խ.Պ.Ղարիբյան Հայ բանահյուսության քրեստոմատիա

2. Ջ.Ա.Ղազարյան Բարոյական սկզբունքները էպոսում

3.Սասնա ծռեր, հատոր Բ

4.Հ.Օրբելի,Հայկական հերոսական էպոսը